

## Մկրտիչ Արմեն

### Շրջում Եր Էստուգիաստը

1

Շրջում Եր Էստուգիաստը Երևանի ծայրամասերով և դիտում Եր: Նրա սիրտը լցված էր բազմաթիվ հույզերով և աչքերը՝ նոր տպավորություններով: Նրան դյուրեմ էին նեղ նրբանցքները, ապա հանկարծ լայն հրապարակը, նորից նեղ նրբանցքները և հանդիպող ծառաշատ պարտեզները: Բարձր պարիսպներն իրենց ետևում հազար ու մի հրաշքներ էին թաքցնում նրա աչքից և շրջում էր նա՝ Էստուգիաստը... Շրջում էր նա՝ Էստուգիաստը:

Շրջում էր և նրան տանում էին նեղ փողոցները, կանգնեցնում մի դռան առաջ, ապա նորից քայլել տալիս: Եվ նա գնում էր, և նա ուրախ էր, որ չգիտեր, թե ուր էր գնում: Յուրաքանչյուր անկյունն իր ետևում մի նոր տեսարան էր թաքցրած լինում և յուրաքանչյուր թեքվածքը՝ նոր տպավորություն:

Մի ժամ էր, ինչ նա մտել էր մի նրբանցք և գնում էր, բայց դեռ չէր հանդիպել ուրիշ փողոցի: Օձապտույտ նրբանցքը ձգվում էր հազար ու մի քմահաճ զիզազաներով, և հիացած Էստուգիաստը գնում էր...

Ահա վերջապես նա դուրս ելավ մի լայն փողոց, լայն ու ամայի: Փողոցի մի ծայրը թեքվում էր դեպի ինչ-որ կողմ և կորչում, իսկ մյուս ծայրը բացվում էր դեպի լայն և անծառ դաշտը: Թվում էր, թե այդ փողոցով վերջանում էր նրբանցքների պանորաման: Բայց Էստուգիաստն իր փնտրող հայացքով գտավ մի ուրիշ նրբանցքի բացվածք այդ լայն փողոցում և կարոտով մտավ այնտեղ: Նորից շրջում էր Էստուգիաստը... Նա ոչ մի տեղ չէր տեսել այս ամենը և Երևանը նրան թվում էր աշխարհի ամենահետաքրքիր քաղաքներից մեկը: Ուրիշ ոչ մի տեղ չկա ծայրամասային այս զարմանալի անդորրը, այս անմարդությունը և այս թմրեցնող շոգը: Ոչ մի տեղ չկան այս տարօրինակորեն նեղ և մարդկային հետաքրքրությունն այդքան բորբոքող նրբանցքները...

Ոչ մի տեղ չկա, ստո՛ւպ, ահա այս տեսարանի նման մի ուրիշը...

Էստուգիաստը կանգ առավ՝ հիացմունքից քարացած: Նրբանցքի միապաղաղ գորշ պատերի շարունակությունն ընդհատելով, կանգնած էր երկհարկանի տան կողքային մի պատ: Ինքնին այդ պատը ոչնչով հետաքրքիր չէր, բայց ահա երևում էր տան ճակատը, որը գտնվում է պարտեզի մեջ:

Տան ճակատը... Արևելյան ո՛ր գեղեցկուհու աչքերն են այդքան գեղեցիկ եղել, ո՛ր գեղեցկուհու աչքերն են այդքան խորհրդավոր և հետաքրքիր երևացել իրենց ետևում թաքցրած գաղտնիքներով, որքան, որ այս լուսամուտները: Եվ ո՛ր աղջկա կուրծքն է այնքան գրավիչ և սքանչելի թվացել, որքան որ այս երկար պատշգամբը...

Շրջում էր Էստուգիաստը և կանգ առավ: Պարտեզի ծառերն իրենց խիտ ստվերի տակ ծածկել էին այդ գեղեցիկ տունն իր պատշգամբով: Ինչի՞ Եր նման այդ տունը՝ տա՛ն, թե պալատի, տա՛ն, թե երագի, տա՛ն, թե երգի...

Ներսից, պարտեզի պատի ետևից, լսվում էր, թե ինչպես խոխոջում էր ջուրը և գնում էր՝ չգիտես որտեղից եկած և դեպի ուր շարունակվելով: Էստուգիաստը չէր հիշում, թե իր շրջագայության ընթացքում նա այդ մոտակայքում ջուր տեսած լինե՞ր...

Չարմանալի էր և սիրելի... Շուրջը նրբանցքի երկու ծայրերը կորչում էին իրենց թեքվածքներում: Էստուգիաստը չէր կարողանում որոշել շրջակայքի պատկերը՝ նույնիսկ մոտավոր չափով: Բարձր պատերը և նեղ նրբանցքի զիզազաներն իրենցով թաքցնում էին այդ տեղերի գաղտնիքը: Բայց ահա պատշգամբը... Այնտեղից, անշուշտ, ամեն ինչ կերևա... Անշուշտ մի անսովոր տեսարան կբացվի դեպի նրբանցքների, պարտեզների և տների խճճված ցանցը...

Առաջին միտքը, որ զբաղեցրեց Էստուգիաստին, այն էր, թե ովքե՞ր են ապրում այդ տանը: Անհնար էր, որ նման գեղեցկությունն իր մեջ թաքցրած չլիներ Լույնապիսի Լուրբ, Լույնապիսի խորհրդավոր գեղեցկություն:

— Անհնար է,— մտածեց Էստուգիաստը,— որ այստեղ ապրեն պառավներ ու ծերեր կամ տգեղ ու չար մարդիկ: Անհնար է, որ երգի նմանվող այդ տանն ապրեն չոր ու գործնական մարդիկ...

Իսկ ո՞վ, ո՞վ է ապրում այդտեղ...

Էստուգիաստը մտածում էր: Նրա մտքերը շրջում էին բոլոր ուղղություններով, բոլոր կողմերով և կանգ էին առնում մինևույն կետի վրա: Այդ տանն ապրում է մի լավ, մի սքանչելի աղջիկ...

— Կարինե,— մտածեց Էստուգիաստը:

Նա Լորից նայեց պարտեզից երևացող ծառերի գագաթներին, պատշգամբին, լուսամուտներին, որոնք փակ էին և վարագուրված:

— Կարինե,— մրմնջաց Էստուգիաստն ինքն իրեն:

Պատշգամբի վրա կախված ծառի ճյուղերը խշշացին և Լորից կանգ առան: Մի թեթև հով եկավ և անցավ: Էստուգիաստին թվաց, թե մեկը գուրգուրեց նրան:

Վերևում տան դուռը բացվեց պատշգամբի վրա և՛

— Կարինե՛,— բացականչեց Էստուգիաստը:

Աղջիկը չլսեց: Նա գնաց դեպի պատշգամբի մյուս ծայրը և վերցնելով այնտեղից մի կապույտ ջրաման՝ վերադարձավ: Նրա բարակ զգեստի տակ զգացվում էր աղջկա կազմվածքի ամբողջ գեղեցկությունը: Նրա մերկ ոտքերը կաթնագույն էին: Նրա մի ուսն անփութորեն բացվել էր և դրա սպիտակության վրա ծառն իր կանաչավուն ստվերն էր գցել: Նա ուներ երկար մազեր, որոնք շաղ էին եկել մեջքի վրա:

Իսկ դեմքը...

Էստուգիաստը դեռ չէր տեսել այդպիսի գեղեցկություն:

— Կարինե,— մրմնջաց նա:

Մի վայրկյա՞ն տևեց դա, թե՞ մի ամբողջ ժամ՝ Էստուգիաստն ասել չէր կարող: Նա սթափվեց միայն այն ժամանակ, երբ աղջիկը Լորից մտավ տուն:

— Կարինե,— մտածեց Էստուգիաստը՝ կրկնելով իր տարիներով երազած անգո աղջկա անունը...

Լորից շրջում էր Էստուգիաստը, բայց նրա մտքերն անդադար զբաղված էին աղջկանով: Ահա մի քանի քայլ ևս գնաց, բայց շարունակել չի կարող: Նա վերադառնում է: Նա Լորից շտապում է դեպի պատահականորեն հայտնված սքանչելի տունն ու պարտեզը և դեպի անծանոթ, հրաշալի աղջիկը: Գալիս է Էստուգիաստը, կանգնում է իր նախկին տեղը և Լորից է նայում: Նրա կուրծքը լի է սիրով ու վշտով, կարոտով ու տանջանքով: Նա ուզում է ճչալ, կանչել նրան և նայելով ներքևից վերև՝ դեպի պատշգամբ, խոսել նրա հետ, ասել նրան, որ երկար տարիներ ինքը նրան է փնտրել և նրան է երազել, բայց ոչ մի տեղ չի գտել, չի իմացել, թե որտեղ է ապրում նա՝ Կարինեն... Եվ ահա, ահա հայտնվել է նա... Այսպես հանկարծ և այսքան պատահաբար... Մի՞թե այժմ պետք է Լորից ընդմիջտ բաժանվել, հեռանալ: Մի՞թե Կարինեն ևս չի սիրում նրան: Մի՞թե նա ևս չի երազել նրան և այժմ մի՞թե չի մեկնի իր սպիտակ, Լուրբ թևերը և չի մրմնջա.

— Եկ վերև, եկ ինձ մոտ, Էստուգիաստ...

Էնտուզիաստը կնստի պատշգամբում, կլսի ջրի և ծառերի խշշոցը և մեղմ կգրկի իր Կարինենին... Կնստեցնի նրան իր կողքին, կնայի նրա նուրբ ու փխրուն կազմվածքին, գունատ-կաթնավուն մաշկին, ծառերի կանաչ ստվերի տակ կանաչավուն դարձած աչքերին և կշոյի նրա թույլ, երկար թևերը...

Ո՞վ կարող էր ենթադրել, թե Էնտուզիաստը հենց այստեղ պիտի գտներ նրան, ում այնքա՛ն փնտրել էր...

Ահա իր երջանկությունը... Նա եկել և թաքնվել էր նրբանցքների լաբիրինթոսի ահա այս անկյունում, բնակվել էր այս տանը, որպեսզի մի օր էլ, կույր պատահականությամբ, իր մոտ բերեր Էնտուզիաստին...

— Կարինե... — մրմնջում է Էնտուզիաստը և չի համարձակվում կանչել նրան, թեև վստահ է, որ Կարինե է նրա անունը, և նա մենակ է ապրում այդ տանը...

Նրան գեղեցիկ չի թվում այդ՝ կանչել աղջկան: Կարինեն նորից դուրս կգա պատշգամբ: Այդ ժամանակ Էնտուզիաստը կնայի նրան իր սիրող աչքերով, և աղջիկը կզգա այդ...

Իսկ երբ նա նայի Էնտուզիաստին, Էնտուզիաստը կտա նրա անունը.

— Կարինե...

Էնտուզիաստը, որն այդքան շրջել էր և հոգնություն չէր զգացել, այժմ հոգնեց իր ներքին, հոգեկան լարվածությունից: Նա հենվեց դիմացի պատին և սկսեց սպասել: Նրա աչքերն անթարթ սևեռված էին դեպի պատշգամբ, որտեղ չէր երևում ոչ ոք: Երբեմն միայն քամին շարժում էր պատշգամբի վրա կախված ծառերի ճյուղերը և այդ ժամանակ Էնտուզիաստին թվում էր, թե նորից գալիս է նա՝ Կարինեն...

Եվ գոհ էր Էնտուզիաստը, որ ծառերի կանաչն արդեն հոգնեցնում է իր աչքերը: Երբ դուրս գա այդ սպիտակ աղջիկը, նա Էնտուզիաստի հոգնած աչքերում կերևա կանաչ լույս հագածի պես և դա կլինի ավելի երազային...

#### 4

Երկար չսպասեց Էնտուզիաստը: Ահա նորից դուրս եկավ աղջիկը և սկսեց ավել պատշգամբը: Ավելիս, կռացած դիրքով, նա տեսավ Էնտուզիաստին և հետաքրքիր նայեց: Հասել էր վայրկյանն Էնտուզիաստի համար: Նա հիացմունքով նայեց աղջկա աչքերին և շշնջաց.

— Ո՞վ ես դու, Կարինե...

— Իմ անունը Կարինե չէ, ընկեր...

Էնտուզիաստի աչքերը մթնեցին: Մի վայրկյանում չքացավ նրա երազը:

— Ես այստեղ կորցրի իմ Կարինենին... — մրմնջաց նա:

— Կարինե՞, — հարցրեց աղջիկը վերևից, — որտե՞ղ կորցրիք: Ի՞նչ տեսակ կին էր՝ պառա՛մվ, թե՞ շահել...

Ապա մի րոպե մտածելուց հետո բացականչեց.

— Սպասեցեք, հարցնեմ ամուսնուս, նա երկար ժամանակ նստած էր պատշգամբում, գուցե տեսած լինի...

Նա ձայն տվեց, ապա տեսնելով, որ ամուսինը չի գալիս, ինքը գնաց ներս՝ նրան հարցնելու: Եվ երբ նորից դուրս եկավ՝ բերելով բացասական պատասխան, ներքևում փողոցում, ոչ ոք չկար:

Էնտուզիաստն անհայտացել էր...